եալը ձեռագրին յիշատակարանէն. «. . . Զստացող սբ. և փրկագործ Աւետարանին . . . զԱրապկերցի մահտեսի Մարուզէն յիշեցէք ի Քս. որ ստացաւ զսա վասն հոգւոյ հանգուցելոյ Աստուածատուր քրիստոնէին և ի փրկութեան հոգւոյ իւրոյ և բարի ծնողացն իւրոց մհտ. Պետրոսին և մհի. Եղնիկին, և կողակցին իւրոյ մհտ. Եաղկուլին և դեռաբոյս որդւոյն մհտ. Պողոսին և հօրեղբաւրն Յակոբջանին, և եղբարցն Յովհաննէսին և մհտ. Գրիգորին, և այլ ամենայն զարմից և զաւակաց նոցա, կենդանեաց և ննջեցելոց։ Զի այս օրհնեալ մհտ. Մարուզէ հանդերձ ամենայն ընտանեօք եկն ի սբ. քաղաքս Երսղմ. յուխտ և յերկրպագութիւն լուսաբուղխ գերեզմանին Այ. մերոյ և ամ. աստուածահոտ տեղեաց տնօրինականաց եւ զկնի ամենայն տրոց և ողորմութեան իւրոյ ստացաւ և զսբ. աւետարանն բարեյիշատակ հոգւոյ իւրոյ և ամ. վերոգրելոցս և ետ անջինջ յիշատակ յաստուածադիր յԱթոռս սբ. Յակոբ. . . .եղև այս ի թվին ՌՃՀԳ (=1724) ամին, ի մարտի Ժ. . .»։ (Խաչ. Ցուց. տետր Է. էջ 528-30։

ՄԱՐՈՒԳԷ ՎՐԴ. ԵՒԴՈԿԻԱՅԻ.—Մբ. 1885էն առաջ կը միաբանակցէր։

ՄԱՐՏԻՐՈՍ ԱԲ.— ՄՁ. Թ. 135 ձեռագիր Գանձ գիրքը (1595 ին ընդօրինակուած) որուն ստացողն ըլլալով Մարտիրոս աբ.՝ Ս. Յակոբի վանքին կը նուիրէ զայն հետևեալ յիշատակարանին համաձայն. «. . .Եւ արդ ես տէր Մարտիրոս աբեղայս ետու ըզպատուական գանձարանս, յիշատակ ի ս. քաղաքն Երուսաղէմ ի դուռն սբ. յարութեան ի լուսաբուխ և յած. ընկալ լուսաշաղախ սբ. գերեզմանին։ Եւ անջինջ յիշատակ կացցէ ի դուռն սբ. Յակոբայ մեծափառ և երկնանման պատրիարքարանիս, որ է գլխադիր սբ. յակոբայ եղբաւրն յովհաննու Աւետարանչին, որ է այժմ վանք Հայոց, ի ձեռն երանեալ և երջանիկ եւ մեծահամբաւ և յամ. բերանոյ երանեալ շնորհազարդ պատրիարքին տր. Անդրէասին, և իւր նորաբողբոջ և դեռաբոյս նորընծայ տր. Դաւիթ արհի. եպս. ին. . .»։ (Խաչ. Ցուց.)։

ՄԱՐՏԻՐՈՍ ԱԲ.—Մբ. Թերեւս այս անձն է որ Գանձգիրքը (ՄՁ. Թ. 273) յիշատակ կուտայ Ս. Ծննդեան վանքին Ս. Աստուածածին եկեղեցիին՝ հետեւեալ յիշատակագրութեամբ.